ARMENIA. Journal en langue Arménienne fondé à MARSEILLE en 1885

ԱՐՄԱՏ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ԱՉԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱՅԼՆ

ԲԱՒՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ամբողջ 34րդ տարեշրջանի (1918 օգոստոս–1919 յուլիս) բաժնորդագինն է 20 ֆրանգ. Թիւրքիոյ և Պարսկաստանի համար 10 ֆրանգ, ԿԱՆԽԻԿ: Ամսական բաժնորդագինն է 2 ֆրանգ. Թիւրքիոյ և Պարսկաստանի համար 1 ֆրանգ.: Նամակ կամ դրամ ղրկել այս հասցէով.

M. PORTOUKALIAN
Directeur du journal *Armenia*
MARSEILLE (France)

ԼՐՏԱՒՐԻ
ԹԻՒ 7

1918 ՄԵՂՏԵՄԲԵՐ 18 Դ.
(Ն. Տ. 1918 Սեպտեմբեր 5)

ՊԱՏՄԱՆՆԵՐ

Խմբագրութիւնը եթէ հարկ համարի, համառօտելով և կամ մասամբ միայն կը հրատարակէ իրեն ղրկուած գրութիւնները: Պարտաւոր չէ վերադարձնել չհրատարակուած ձեռագիրները:

Ծանուցումներ կընդունուին հայերէն և ֆրանսերէն լեզուով:

Ծանուցման 1 միջակ գիրը 1 սանդիմ կարժէ. 1 գլխագիրը 2 սանդիմ:

Les annonces en français et en arménien sont reçues au bureau de la Rédaction : Place Alexandre-Labadié ,17

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մառնը. — Նամակ Հնդկաստանէն (Ռանգուն). — Եկեղեցի եւ եկեղեցական. — Տ. Պալֆուրէն նամակ մը Պօղոս Նուպարի փաշային. — Վսեմ. Պօղոս Նուպարի հրաժարը Հայ Ազգային Պատուիրակութենէն. Ամերիկեան Հայասիրաց Բանմնախումբի դիմումը. — Բրոֆ. Ա. Խաչատուրեան. Տեղական. — Օդանաւով ուխտագնացութեան փարիզի վրայ. — Ռուսիա. — Պատերազմական լուրեր. — Խաղաղական բանակցութեան առաջարկ:

ՄԱՌՆԸ

Դէպքեր կան որոնք թէև ժամէ ժամ կանչ՝ բայց ապ ևս պարտաւոր են պատմական կարեւորութեան տարեգրութեանց մէջ: Այդ դէպքերէ մէկն է և գլխաւորը 1914 օգոստոսի 4–5 գիշերուան Մառնի ճակատամարտը:

Մինչ այդ, Տիտաններըը, ակընկալութիւնները, ակնածութիւնները փարիզը, հեռաւորապէս ամբողջ Ֆրանսան, իրը պերճանական անվիճելի մայրաքաղաքութիւն: Սակայն ցնորքը կը ցնդի երազի մը խարկանքը թեղեալ միայն ու սուտ իրականութիւնը գերմանական յոյսերու խորհուրդ գերիշխանը կը պարզէ մեծամոլութեան ու ամբարտաւանութեան կատ հերոսներուն դիմաց, խելագրնոր նահանջը հրաշքի մը պատճառով կը յաջորդէ ինքնավստահ արշաւին, Ֆրանսական ոտքին ներքև, մահ անխուսափելի պատանէշ ներու չինած կաշկանդն այս անպատուելի խիղճա, վտանգի բովանդակ գիտակցութեամբը և հայրենիքի անբաժանելի և մեռնելի սիրովը մկրտուած ու զօրացած:

Մեր նպատակը չէ թուարկել այդ յաղթանակի ճշմարիտ արդիւնքները: Միթէ այդ յաղթանակի տուրքերուն հանդէսները ամենէն պերճախօս և արդար մեկնիչները չեն իր անջնջելի կարեւորութեան: փրկուած փարիզը, անով Ֆրանսան ու Դաշնակիցներու գաղափարը: Ամէն ոք կրնայ անպարտելի գաղափար ճարտար կառավարութեամբ մը. և ժողովրդ խելքով ու զգացումով միասին գաղափարեց այդ այժմ արժանապատուէս ղեկի յաղթանակ: Արարի ու հոգիի իրական գիւտագնութիւնը, յանձին Ֆրանսայի, ճակատագրական աներազմի գիտական դիւտին հնարամտութեան որ կը մարմնաւորէր Գերմանիան և Ֆրանսա յաղթեց 1914 սեպտեմբերին, Մառնի մէջ:

Ահա թէ ի՛նչպիսի անխարտակելի այժ մ՛է հայրենասիրական հչմարիտ պին, գիտակցութիւնը որ անպէն բազուկը սուրին ղեմ կը ցցէ:

Այժմն բանէ առաջ այդ ոգին պէտք է չպատել, խմորել հայ հոգիին մէջ ու ան պիտի գիտնայ վշրել ամենակատ չգիտան անգամ:

Էրր արժանապատուութեան, պատուութեան և իրաւունքի զգացումը չարժի, ոտքի կանգնի, երկմիտ պատանէներն անգամ անդօր կը դառնան դէմ դնելու, կռուելու. մի նակ թէ այդ զգացումը քրմիր գիտակից, անձնուրաց հոգիներէ:

Թող դայ այդ ցանկալի օրը և ահա հայութիւնը լիովին յաղթանակած պիտի ըլլայ ապահովապէս: Գործերը անհատանելի դերբնական այժ մ՛է որ չպարտուիր:

Թ. ԵՂԻՇԷ:

ՆԱՄԱԿ ՀՆԴԿԱՍՏԱՆԷՆ

Ռանգուն, 10 յուլիս 1918

Յունիս 26ին կալկաթայէն կնքեց իր մահկանացուն պ. Վիլիէմ Ց. Շերբօսհանը, որ մի քանի ամսով առաջ հիւանդութեան պատճառով դնացել էր այնտեղ բժշկուելու:

Հանգուցեալը իր հանրածանօթ լինելու և քաղաքական ու հասարակական բոլոր շրջաններուն մեծ յարգանք ու համակրութիւն վայելելու պատճառով կարծուած են աւելորդ չի համարուիլ այս մի քանի տողերը նրա կենսագրին նուիրել:

Վիլիէմ Շերբօսհանը ծնուել է Կալկաթայում 1856ին և գաւակ է անգլիացի դատարանի փաստաբան Ց. Շերբօսհանի: Իր նախնական կրթութիւնը ստացել է իր ծննդավայրի St. Xavier's, Doveton և Hughli Collegeներում: Դպրոցն աւարտելուց յետոյ, անմիջապէս մտել է Բէնգալի քաղաքական գործերի պաշտօնավարութեան մէջ: 21 տարեկան հասակում նա տեղափոխուել և հաստատուել է Ռանգունում ու վարել է զանազան կառավարական գործեր և պաշտօններ, որոնց մէջ մի քանի տարի էլ բոլորի վստահութիւնն է վայելել: Հիւանդութեան և մասամբ ևս ծերութեան պատճառով՝ հրաժարուել է 1904 թուին, բայց երբ կամաց-կամաց կարողացել է իր առողջութիւնը վերստանալ, նրա վաս եանդը չի թոյլ տուել իրեն հանգիստ մնալ և նա սկսել է իր առանձին գործը կատարել որպես Estate Agent and Land Valuer և այդ դէպքում էլ կարողացել է բոլոր վաճառականական ընկերութիւնների ու բանկերի համակրութիւնը ձեռք բերել, որի շնորհիւ անգլիական Bank of Bengal կոչուել է նրա բոլոր կալուածների կառավարիչ: Իր խիստ ու փորձուած լինելու համար 1907ին Ռանգունի հասարակութեան կողմից ընտրուել է Lord Minto փոխարքայի ընդունելութեան հանդէսի պետավար, մշակութեան մասնաճիւղի նախագահ և 1914 թուին էլ King Edwardի չքեղ ու մեծաժախս արձանի շինութեան քարտուղար: Այդպէս անցնում 30 երկար տարիների ընթացքում նա բազմակողմանի մեծ ու գնահատելի ծառայութիւն է մատուցել քաղաքական և հասարակական գործերին, որոնց փոխարինութեան համար պարգեւատրուել է — Ա. Հնդկաստանի փոխարքայ Lord Curzonից՝ ոսկէ մեդալով. Բ) Ռանգունի մարզի հասարակութեան կողմից՝ մի հատ արծաթեայ տեսակ՝ մեծացած 1907 թ. փոխարքայի ընդունելութեան հանդէսի յիշող պետավարութեան համար. և Գ.) Անգլիական կառավարութեան կողմից, 1911ին, Durbar Medalով և 1916ին՝ K. I. H. տիտղոսով:

Բացի քաղաքական ու հասարակական գործերից, նա միշտ էլ պատրաստ ու սիրայօժար կերպով մասնակցել է Ռանգունի փոքրաթիւ հայ համայնքի ազգային գործերին և իր կարողութեան նեղութեան չափ՝ չի խնայել ամեն բարեգործական և նիւթական ջանք ու զոհողութիւն գործ դնել նրանց իրագործման համար: Վերջին երկարատեւ աշխարհակործան պատերազմի սկսուելուց ի վեր մինչև իր մահուան մի քանի նախընթաց ամիսները, տեղւոյ հայ համայնքի կողմից ընտրուել էր Burma War Refugees Fund, Armenian War Prisoners Fund և Armenian Club քարտուղար ու նախագահ:

Ալդարև՝ շատ մեծ է Ռանգունի փոքրաթիւ հայութեան կրթասէր յանձին վ. Շերբօսհանի որ բոլորից յարգուած ու սիրուած էր. մանաւանդ ներկայ անհրաժեշտ ժամանակում, երբ Հայ ազգը աշխարհի

բոլոր անկիւններում եւ մեծապէս կարիք ունի նրա նման ազգասէր եւ բարի բան նշանակութեամբ հայ ոգով առաջնորդող անհատների։

Բայց ցաւում ենք կասկածելով, որ նրա զաւակները դժուար թէ կարողանան իր գծած ուղիով գնալ եւ նրա նման ազգի ու հասարակութեան պիտանի անդամներ լինել։ Մաղթում ենք միանգամայն որ մենք սխալուած լինենք։

Հայ ոգին ու հայկական զգացումը հետզհետէ բացակայում է Հնդկահայ նոր սերունդի սրտի եւ հոգու խորքերից եւ այլասերման ու օտարացման ուժգին հոսանքները իրենց ալիքների մէջ խեղդում ու անյայտացնում են նրանց եւ իրենց սեւ կնիքն են դրոշմում նրանց ճակատին ու նրանց անյայտ ժառանգների վրայ...

Հայոց արիւնների հայրենիքում հրէշային կատարած ու բնաջնջման սուրն ու թուրն է բնաջնջում հայ ազգի պատուական զաւակներին, իսկ հնդկական ազատ ու խաղաղ միջավայրում ևս օտարացումն ու այլասերումն է իր հոսանքների մէջ անհետացնում հնդկահայ նոր սերունդը եւ մեր բարեպաշտ ու ազգասէր նախահարց յաղթարդում են օրէ օր ազգի համար կորած և միանգամից անպէտքացած կամքը ներ...

Մ. ԳԱՍՊԱՐԵԱՆ

ԵԿԵՂԵՑԻ ԵՒ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

(Շար. ծրդ համէն եւ վերջ)

Այս կէտի էլ ուիլի պարզ պիտի լինի հայ հնդկականի համար և նա պիտի լինի ժողովրդի միտքը լուսաւորող, որպէսզի ա՛չ հայ հնդկացոց ազգերին յարաբերութեան կապմիջ (ինչպէս որ մերձիկոս կամեցաւ փորձանքում հայ հնդկական կապեածները պետականացնել և նորին Սրբութիւն Ամենայն Հայոց կաթողիկոսը չատ իրաւացի կերպով իր քաղաքի ձայնը բարձրացրեց) և ոչ էլ հայ հնդկացին ընդդիմանալ, երբ հայ ազգը նրա հանդէպ իրաւացի պահանջներ դնէ։ Սակայն դժբախտաբար խոստովանելու է, որ մեր այսօրուայ հնդկականութիւնը (մի կողմ թողնելով սակաւաթիւ բացառութիւնները) այս ակնկալութիւնը չի արդարացնում և ի վիճակի էլ չէ արդարացնելու, քանի որ նրա ըմբռնումը չատ հեռու է հնդկեցի և հնդկեցական գաղափարների վերն ընդգծած իմաստից։ Եթէ մեր այսօրուայ հնդկեցականներից ամենից չատ ծափահարողների (արժանաւորների մասին չէ խօսքս) խօսքն ու գործը ի նկատի առնենք, կտեսնենք, որ այդ հնդկեցականները իրենց կոչման մէջ տեսնում են ամեն ինչ, բայց էականից։ Շատ քչերը կան, որոնք ի վիճակի են ըմբռնելու իրենց նուիրական կոչման էութիւնը և այդու համապատասխան խօսելու և գործելու։ Մի օրինակ միայն բաւական է ցոյց տալու ասածիս ճշմարտութիւնը։

Ցաճախ հանդիպում ենք հայ հնդեցականների, որոնք պաշտօնապէս կամ կիսապաշտօն կերպով անդամ են այս կամ այն քաղաքական կուսակցութեան։ Ես քաղական կուսակցութեանց գոյութեան դէմ ոչինչ չունիմ. նոքա եղել են, կան և կլինին ամեն ազգի մէջ։ Սակայն ես չեմ կարող ըմբռնել, որ մի ճշմարիտ հնդեցի զուգական կարող է և՛ քաղաքական կուսակցութեանց անդամագրուիլ։ Այս երեւոյթն ինձ համար անըմբռնելի է երկու նկատառումով. նախ տեսական և ապա գործնական։ Տեսականօրէն քննելով խնդիրը՝ պրա նում ենք որ մեր մէջ գոյութիւն ունեցող քաղաքական կուսակցութիւնները համարեա առանց բացառութեան ամենքն էլ ունեն կամ պակաս չափով սոցիալիստական են, լինի մի ինդպային թէ ազգային հողի վրայ, իսկ մենք դիտենք, որ սոցիալիզմը պատանելով նիհիլատական վիճակութիւն՝ ժխտում է կրօնը։ Ահա թէ ինչ մեծ հակասութեան մէջ է ընկնում այն հայ հնդեցին, որն անդամագրուում է այս կամ այն քաղաքական կուսակցութեան։ Գալով խնդրի գործնական կողմին՝ կարելի է հարց տալ — ինչ չահ ունի հայ ազգը (գեթ չեմ ասում հայ հնդեցին), որ նրա հնդեցականը անդամ լինի այս կամ այն քաղաքական կուսակցութեան. պատասխանն է — ոչ մի. ընդհակառակը՝ ինձս Միթէ՞ ինատակար չէ հայ ազգի համար, երբ նրա հնդեցականը գիտակցօրէն թէ անգիտակցօրէն իր վրին է վերցնում այն պիտի ու աշխարհահայհոյեց, որը ներում է ատելով հնդեցականին կոչման արժէքը։ Միթէ ինատակար երեւոյթ չէ երբ հայ հնդեցականը մէկ քաղաքական կուսակցութեան անդամագրելով պարտականութիւն է ստանձնում այդ կուսակցութեան չահերը պաշտպանել ընդգէմ միւս կուսակցութիւնների. ինչ որ նոյնն է թէ ազգի մէկ հատուածի վրայ կըռնելով միւսները հալածել։ Միթէ կարելի է քաղաքական կուսակցութեանց հետ մի առնչակներքին ու արտաքին խնդիրներով զբաղող հնդեցականից սպասել, որ նա ժամանակ և տրամադրութիւն ունենայ Աստուածի կենդանի խօսքը քարոզելու իր ժողովրդին։ Աչուշտ ոչ. «Ոչ ոք կարէ երկուց տերանց ծառայել»։ Իր կոչմանը գիտակից հնդեցականը պիտի տեսնի որ ինչպէս ամեն հնդեցի, նոյնպէս և հայ հնդեցին կազմուած է զանազան խաչերից, որով և նա հնդեցու համար լինելով է և հնդեցին կազմող այդ տարբեր խաչերի համար, իսկ որպէսզի հնդեցականը կարողանայ ամենքի համար լինել, պէտք է որ նա ամենքից դուրս և բարձր լինի։ Մեր այսօրուայ հնդեցականներից ոմանց վերոյիշեալ ընթացքը առիթ է տալիս նաև ապագայի վատ նախազգացումների։ Այն ապագան, որին մենք անհամբեր սպասում ենք և որը մեր ազգին պիտի տայ իր երազած քաղաքական ազատութիւնը, բնականօրէն ասելու է հայ հնդեցուն. «Հայ ազգը երախտապարտ է քո հանդէպ, որ անձնուիրաբար պահպանեցիր նրա ազգային իրաւունքները՝ այնքան ինչքան որ կարողացար. իսկ այժմ քանի որ ազգը ի վիճակի է ինքնուրոյն կերպով վարելու իր ազգային գործերը և պաշտպանելու իր չահերը՝ յանձնի՛ր նրան այն, ինչ որ իրինն է»։ Իսկ հնդեցին իր հերթին պատասխանելու է. «Գիտենք որ հայ ազգը իրօք ահեր է իր քաղաքական ճակատագրի՝ թող այդպէս էլ լինի»։ Այս է խնդրի միակ ճշմարիտ և ազգօգուտ լուծումը, եթէ չենք ուզում, որ մեր մէջ ևս կրկնուի այն, ինչ որ տեղի է ունեցել Արեւմուտքում կաթոլիկ հնդեցու և պետութեան միջև։

Ի՞նչ հայ հնդեցականը. արդեօք նրան անհաճոյ չի՞ թուում այսպիսի մի իրագործութիւն. արդեօ՞ք նա պատրաստ պիտի լինի ուրախութեամբ դիմաւորելու այս ուրախալուր օրը։ Դա կախուած է այն հանգամանքից թէ ինչպէս է ըմբռնում հայ հնդեցականը իր կոչումը։ Եթէ նա հնդեցու և իր կոչման ճշմարիտ պիտակութիւնը ունի՝ հաճութեամբ կցարմարի այս նոր իրագործութիւնը և կչարունակի նոր պայմանների մէջ գործել յօգուտ իր ազգի և հնդեցու։ Հակառակ դէպքում նա կամ պիտի հեռանայ իր ընտրած ասպարէզից և կամ թէ իրականութեան առաջ գլուխ խոնարհած, ձեռքերը պիտի ծալի և նստի, ենթադրելով, որ իրեն այլ ևս անելիք չի մնում։ Եւ որպէսզի ոչ մէկը լինի և ոչ միսը, որպէսզի հայ հնդեցականները ապագայ անկախ Հայաստանի մէջ և կարողանայ իր քաղաքական իշխանութեան հետ ձեռք ձեռքի արած ազգօգուտ գործունէութիւն ունենալ, պէտք է այժմեանից իսկ պարզ լինի նրա համար, թէ վերջի վերջոյ Pascere non aliud est quam docere. (Հովուիլը ոչ այլ ինչ է, բայց եթէ ուսուցանել)։

ԷՌՕԿԱԹ

Տ. ՊԱԼՖՈՒՐԻՆ ՆԱՄԱԿ ՄԸ ՊՕՂՈՍ ՆՈՒՊԱՐ ՓԱՇԱՅԻՆ

Հայ Ազգային Պատուիրակութեան նախագահ վսեմ. Պօղոս Նուպար հեռաւոր նամակը ստացած է Մինդլիսի արտաքին գործերի նախարար Տ. Պալֆուրէն, ի պատասխան այն երախտագիտական ուղերձին որը Պօղոս փաշան ղրկած էր Տ. Պալֆուրին, Հայաստանի ապագային նկատմամբ անոր ըրած յուսադրական յայտարարութեան առթով։

Արտաքին գործերի
պաշտօնարան

Լոնտոն, 2 Օգոստոս 1918

Վսեմաշուք Տէր,

Պատիւ ունիմ շնորհակալութեամբ յայտնելու ձեր Վսեմութեան որ ստացած եմ նախորդ ամսի 23ի ձեր ծանուցագիրը, որով բարութիւնն ունեցած էիք ձեր զգացումներ ինձ բացատրելու, Հայաստանի ապագային նկատմամբ իմ վերջին յայտարարութեանս առթով։

Ինձի մեծ հաճոյք կը պատճառէ այդ բարեկամական նամակը ընդունած լինելս անկէ որ փութաջանութեամբ աշխատած է Հայաստանի դատին համար եւ որ անմնացպէս այնչափ նպաստած է Հայաստանի խնդիրը Եւրոպայի հանրային կարծիքին ներկայացնելուս։

Եմ, Ձեր Վսեմութեան, եւն. եւն.

Ա. Ճ. ՊԱԼՖՈՒՐ

ՎՍԵՄ. ՊՕՂՈՍ ՆՈՒՊԱՐԻ ՀՐԱՃԱՐԸ ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵՆԷՆ

Եղիպտահայ թերթերէն կիմանանք վսեմ. Պօղոս Նուպարի հրաժարը Հայ Ազգային Պատուիրակութենէն։

Գահիրէի «Յառաջիկ»ը, Միսի. ակն իր սասյած տեղեկութեան վրայ հիմնուելով, հրատարակած է թէ Ամենայն Հայոց Հայրապետը, հետեւելով Ս. Թարատի Հանրապետութեան» եւ Պօղոսի մէջ կնքուած դաշնագրութեան պայմաններուն եւ գերմանօ-թիւրք կառավարութեանց ճնշումին տակ՝ հեռագրով յուճած է Բարիզի Ազգային Պատուիրակութիւնը։

Իսկ Ալեքսանդրիոյ «Արեւ»ը կըսէ թէ Էջմիածնէն այդպիսի հեռագիր մը չէ եկած վսեմ. Պօղոս Նուպարին, այլ Պօղոս Նուպար փաշան ինք իր հրաժարագիրը հեռագրով հաղորդած է կաթողիկոսին՝ պետական ճանբով եւ պատճառ ցոյց տուած է իր տիկնոջ հիւանդութիւնը։

«Արեւ»ը կը յարէ նաեւ հետեւեալ տողերը.

Մենք այս տեղեկութիւնները քաղած ենք՝ Պօղոս Նուպար փաշայէ վերջին թղթատարով ստացուած ընտանեկան նամակէ մը։

Գալով հայ-թրքական հաշտութեան դաշնագրին՝ տակաւին ոչ որ տեղեակ է անոր պարունակութեան; բայց շատ հաւանական է որ այնտեղ պայման դրուած ըլլայ պարտադրել կաթողիկոսին որ Ազգ. Պատուիրակութիւնը լուծեալ հռչակէ։

Ամեն պարագայի մէջ, նկատի առնելով մեր ազգի ներկայ ճգնաժամային կացութիւնը և մեր բոլոր այժմեր համերաշխութեամբ ամփոփելու ստիպողական պէտքը, մենք կարծելի կը գտնենք վսեմ. Պօղոս Նուպարի պէս մեծ մարդ մը պակսիլը և ներմտքին կը փափաքինք իր պաշտօն չարունակելուն։ Մինչեւ իր տիկնոջ հիւանդութիւնը և այդ առթով ունեցած մտահոգութիւնները բնականաբար կը զրաւեն ազգին նուիրելիք իր աշխատանքի ժամանակին մէկ մասը, բայց ատոր գործման կրնայ տարուիլ Պատուիրակութեան մէջ իր գործակիցների թիւն աւելցուելով։ Նաեւ հիւանդութիւնը անցողական բան մ՚է որ թեթեւ գործանութեամբ չուտով կը փոխարինուի առողջութեան, ինչպէս կը մաղթենք սրտագին։

Իսկ եթէ գերման և թիւրք տէրութիւնները ճնշում բանեցնելով հայրենակից մեր ազգակիցներին վրայ, Էջմիածնի կաթողիկոսին կը պարտադրեն հրաժարեցնել Եւրոպա մէջ գտնուող և իրմէ ընտրուած Հայ Ազգային պատուիրակութիւնը, այդ ժամանակ գործեալ հարկ կը լինի Ազգ. պատուիրակութեան շարունակութիւնը, նոյնպէս վսեմ. Պօ-

ղա Նուպարի նախագահութեամբ, միայն թէ նոր և աւելի ժողովրդական միջոցով վաերացում մը տալ նպատակ արտասահման գտնուղ Հայ ազգութեան կոչին։ Արդէն արտասահման գտնուղ Հայ ազգայիններէն ընդհանրապէս քիւրքահպատակներ կամ ատանդպատակներ են, բան մը խնդրին առարկայ եղող ժողովուրդներ, սա տարբերութեամբ որ երկրին մէջ եղող իրենց հայրենակիցներ կատարածներուն հետևանքով մը ճակատ մը մէջ և ճնշման տակ գըտնուելով չեն կարող բարձրաձայն յայտարարել իրենց պահանջներ, մինչ նոյն երկրացի և արտասահման գտնուղ Հայեր իրենց ազգային վիճակը և բողոքները ճշդութեամբ ներկայացնելու ազատութիւնը կը վայելեն.

Նոր վիճակը նոր պահանջներ կընէնայ։ Այսպիսի նոր կացութեան մէջ անհրաժեշտ կը դառնայ արտասահման Հայութիւնէն Համաժողով մը գումարել, կարելի եղածին չափ գործնական և կանոնաւոր միջոցներով. և այժ առ Հայ Ազգային Պատուիրակութեան ղեկավարին, Միևնոյն ժամանակ, աւելի ժողովրդական և բան ազգային հիմքերի վրայ հաստատելով զանազան գաղութներէ մէջ Ազգային Միութեան ճիւղերը, պէտք է աւելի սերտ յարաբերութիւններ մշակել և կապակցութիւններ հաստատել արտասահման մէջ Հայ ազգին և իր ներկայացուցիչ մարմիններուն միջև։ Յայտնի է որ Միութեան այժմեան ճիւղերը ընտրուած են դրեթէ բացառապէս կուսակցութիւններու կողմէն, այնպէս որ աւելի միջկուսակցային Միութիւն կամ հաշտութիւն մը եղած է, ժամանակի սահմռկական պահանջներին հետևելով, քան թէ բուն ազգային Միութիւն մը՝ տեղական Հայ գաղութներու քաղաքին անխտրաբար ընդհանուրէն ընտրուած կանոնաւոր կերպով մը։

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՀԱՅԱՍՊԱՍՏ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻ ԴԻՄՈՒՄԸ

Հայկական եւ Սիբրիական Նպաստամատոյց Յանձնախումբը Տքդ. Ճ. Լ. Պարթընի նախագահութեամբ Սանֆրանցիսքոյի մէջ համաժողով մը գումարելով, միաձայնութեամբ ընդունած է բանաձեւ մը եւ զայն հեռագրով հաղորդած է Ուաշինկդընի, Երեսփոխանական ժողովին ներկայացուելու համար։ Ահա այդ բանաձեւի պատճէնը.

« Նկատելով որ հայ ժողովուրդի միացեալ մասը Կովկասի մէջ, զէնքէ ու ռազմամթերքէ զուրկ, բնաջինջ լինելու վտանգին ենթարկուած է Գերմանիայի եւ Թիւրքիայի կողմէն, եւ նկատելով որ Գոնկրէսի ներկայացուցիչ Ազնուաշուք Էտուըրտ Ս. Լիթըլ իր փետրվար 7ի ատենախօսութեամբ Գոնկրէսի մէջ կառավարութեան ուշադրութեան յանձնած է հայկական բանակին կարեւորութիւնը Կովկասի մէջ, եւ շեշտած է այս քրիստոնեայ ազնիւ ցեղին կարեւորութիւնը որ շատ երկար ժամանակէ ի վեր միւս քրիստոնեայ ազգերի կողմէն անկատ մնացած է, մենք կզգանք թէ մեր սիրելի ազգին ազատութեան օրը տակաւին հեռու է լուսանալով, բարեպատեհ է խնդրել որ կառավարութիւնը յատուկ շահագրգռութիւն զգայ բոլոր ազգերին մէջ ամենէն աւելի նահատակուած այս ժողովուրդի կեանքին ու ազատութեան մասին, որոնք ազատութեան գաղափարականով, ցեղով ու կրօնքով միացած են մեզի հետ եւ կը կըռւին հիմա Կովկասի մէջ Ազատութեան դատին համար։

Մենք պիտի աջակցինք կառավարութեան որեւէ քայլին մէջ, որ կարեւոր նը կատէ առնել, պաշտպանելու համարկով կասի մեր պզտիկ Դաշնակիցը։ »

ԲՐՈՖ. Ա. ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ

Ուրախութեամբ կիմանանք թէ Կ.պոլսի մեր ազգային կեդրոնական վարժարանի տեսուչ եւ Կարինի Ճանասարեան վարժարանի նախկին տեսուչ Բրոֆ. Ս. Խաչատուրեան որ Կ.պոլսէն աքսորուած հայ մտաւորականներուն շարքին մէջ կը գտնուէր, կերպով մը յաջողեր է զանազան դժուարութիւններէ յետոյ Պաղտատ անցնիլ ուր ողջ առողջ կապրի այժմ։

ՏԵՂԱԿԱՆ

Ինչպէս Ֆրանսայի զանազան քաղաքներուն մէջ այս ամիս կատարուեցան Մաճկի պատմական մեծ յաղթութեան 4րդ տարեդարձին առթիվ յիշատակի հանդէսներ, Մարսէյլի մէջ ալ անցած կիրակի առաւօտ (սեպտ. 15) Ֆրանսական հայրենասիրական ընկերութիւններ այդպիսի հանդէս մը կատարեցին Նահանգապետարանի հրապարակին մէջ Թափօր մը կազմելով և իրենց դրօշակները պարզած, Սէն-Ֆէոէօլ, Նոայէ և Ալէ որ Մէյան կեդրոնական նշանաւոր փողոցներէն անցան և գնացին 1870ի պատերազմի միջոցին մեծած Պուշտիւ Ռանկի (մեր նահանգի) զինուորներուն յիշատակին նըւիրուած արձանին առջև կանգ առին։ Հոն, չորս տարիներէ ի վեր այս Թափօրի կազմակերպութեան նախաձեռնութիւնն ունեցող N. 1 Réformés ներուն (կռուին մէջ հաշմանդամ դառնալով զինուորութենէ արձակուածներ) նախագահը Տ. Պրիօլ (Briole) ոգևորուած ճառ մը խօսեցաւ, եւ բայրական ոգիով մը ուղղելով անոնց որոնք իրաւունքի, արդարութեան և ազատութեան պաշտպանութեանը համար կռիւը կը շարունակեն և երախտագիտութեան յարգանք մը ամէն անոնց որոնք կռուի դաշտերին մէջ կը հանգչին այժմ և որոնց Թողած որբերին ու այրիներին պաշտպան պիտի հանդիսանան կենդանի մնացողները։

Նահանգապետը, քաղաքապետը և զինուորական հրամանատարը իրենց ներկայացուցիչներ ղրկած էին հանդիսավորը որոնք նոյնպէս քանի մը կարճ խօսք ընելէն յետոյ, ընկերութիւններէ ոմանց բերած պսակները տեղաւորեցան Monument des Mobiles յուշարձանին ստորոտը, յատկապէս պատրաստուած վանդակապատ չորքանկիւն մէջ։

Ինչպէս մեր նախորդ թուով գրած էինք և յետոյ առանձին յայտարարեմք ժ'ալ ծանուցուած էր հայ գաղութին, Թափօրին նախաձեռնարկ ընկերութեան կարգադրութեան համեմատ Մարսէյլի Հայ երիտասարդաց Միութիւնն ալ կը մասնակցէր Թափօրին, հայկական դրօշակը իր առջևէն պարզած և երկու քայլ երիտասարդներ ալ ձեռամբարձ առնելով Միութեան նուիրած մեծադիր և գեղեցիկ պսակը։ Հայկական դրօշակին կը հետևէին հայ գաղութին անդամներէն շատեր ալ, որոնց մէջ և բաւական թուով ծանօթ դէմքեր։ Առաջին շարքերուն մէջ կային նաև մեր փարիզաբնակ հայրենակիցներէն Տիարներ Մինաս Զերազ և Կ. Ց. Բասմաջեան որոնք առայժմ Մարսէյլ կը գտնուին և հաճած էին իրենց ներկայութեամբ պատուել Մասնի յիշատակին նուիրուած այս հանդէսը։ Թափօրին անցած փողոցները երկու կողմի մայթերին վրայ ինչպէս և չէնքերի պատուհանները լեցուած էին հանդիսատեսներով բազմութեամբ և անշուշտ ուրախալի երեսթ մ'էր տեսնել որ Թափօրի շարքին մէջ ուշադրութիւն կը դրաւէր հայկական բանձինը իր դրօշակով և ծածկեպսակով։ Միութեան նուիրած հիանալի պսակը Յուշարձանին ստորոտը դեռեւս պսակներուն մէջ ամենէն աւելի ուշադրաւներէ մին է եղած, այնպէս որ երկար ժամանակ պիտի կրնայ հանդիսատեսներուն ուշադրութիւնը իրեն վրայ դարձնել և անոնց կարդացնել իր այս վերտառութիւնը. L'Union de La Jeunesse Arménienne de Marseille Aux glorieux vainqueurs de la Marne.

* * *

Մարսէյլ, 13 սեպտեմբեր 1918

Հայոց Բարեգործ. Ընդհ. Միութեան տեղւոյս Մասնաժողովէն նամակ մը ըստացաք եւ մք Մարսէյլի Հայուհեաց Միութեան ուղղեալ՝ որով կ'առաջարկուի՝ Տիար Յակոբ Սեդրանի քով մի քանի տարիէ ի վեր աւանդ Թողուած Միութեանս պատրաստ դրամը յատկացնել Թրքական գազանութիւններէն ճողոպրած եւ երուսաղէմ հաւաքուած հայ որբուկներու դաստիարակութեան։

Ուստի Ափէնիա»ի միջոցաւ Հայուհեաց Միութեան բոլոր անդամները ժողովի կը հրաւիրուին ամսոյս 22ի կիրակի օրը իրիկուան ժամը 4ին Զըգչըգեան բնակարանը Rue Breteuil, N. 121, ուր ներկայներու մեծամասնութեան հաւանութեամբ պիտի որոշուի մեզ եկած առաջարկութեան գործադրութիւնը։

Անոնք որ ժողովին ներկայ չը պիտի կրնան ըլլալ, Թող հաճին իրենց կարծիքը մեզ յայտնել նամակաւ։

Մ նամ յարգանօք

Մարսէյլի Հայուհեաց Միութեան
Ընդհանուր Ժողովոյ Ատենապետ
Մաննիկ ՋԽՋԽԵԱՆ

ՕԴԱՆԱՒԵՐՈՎ ՌՄԲԱՋԳՈՒԹԻՒՆ

Գերման օդանաւերը տորմիլներ սեպտեմբեր 16ի գիշեր եկան ռումբեր արձակել Փարիզի վրայ։ Դիտարաններէն անմիջապէս ազդարարութիւն եղաւ բնակիչներուն հարկ եղած պաշտպանողական զգուշութիւններն ընելու, սովորականին համեմատ։ Մի քանի գիներ միայն եւ քիչ մը նիւթական վնասներ եղած են։

Փարիզի պաշտպանողական Ծառայութիւններէն հաղորդուելով շուտով փախած են գերման օդանաւերը որոնցմէ մին բռնկելով գետին ինկած է։ Օդանաւին մէջ գտնուող սպայն եւ երկու անձի դիակները գտած են։

ՌՈՒՄԻՍ.

Լէհինի վրայ ժահախտէ կատարող կինը, Տորա Գաբրան, ժահով պաժուեր է սեպտ. 4ին։ Գաբրան հազիւ 30 տարեկան էր և կը պատկանէր բնիկ իտալական յեղափոխական կուսակցութեան ոչ-կոմունիստական թեւին։ Մասնակցած էր 1905ի յեղափոխութեան և 15 տարի տաժանակիր աշխատանքի դատապարտուելով Սիպերիա աքսորուած։ 1917ի մարտ ամսի յեղափոխութեան շնորհիվ ազատուած և Յեղափոխութեան մեծ մայրիկ Գամէրին Պրէշքովսքան ոչակոչած էր։ Երբ պոլշեվիկները իշխանութեան գլուխ անցան, լինք անանց դէմ ալ եղաւ։

Պոլշեվիկ կառավարութիւնը Լէնինի վրայ եղած ժահափորձի վրէժը լուծելու համար, հարիւրաւոր մարդիկ բռնած ազատնած է։

— Ազդարարէն հնոտիկ մը կըսէ թէ պոլշեվիկ կառավարութիւնը անգլիացի 36 պաշտօնատարներ ձերբակալած է և կը սպառնայ սպաննել զանոնք եթէ Լէնինին իր վերքերէ չբուժուելով մեռնի։

Զէզոք աէրութիւններուն ներկայացուցիչները ազդու կերպով յայտարարեր են պոլշեվիկ կառավարութեան որ անգլիական դեսպանատունը յարձակումով կողոպտող անկարգ զօրքերուն վրայ դէնք պարպած էր, պաշտպանելու համար դիւանագիտական անձրեւնաբարեխութիւնը։

Դիւանագիտական շրջանակներուն մէջ կը կարծուի որ պոլշեվիկ կառավարութիւնը պիտի համաձայնի արդար գոհացում մը տալու այս մասին իրմէ եղած պահանջներուն։

— Պոլշեվիկական լրագիրները ժողովուրդը կը գրգռեն անգթօրէն կողոպտելու և սպաննելու քաղքենիները (բուրժուա)։ « կարմիր լրագիր »ը կը գրէ թէ հարիւրաւոր քաղքենիներ սպաննուելով պէտք է փոխարինեն Լէնինի արիւնին ամէն մէկ կաթիլը։

— Պետրոգրադէն եկած լուրերուն նայելով, ժողովուրդը ծայր աստիճան յուսահատած և գրգռուած է Լէնինի կառավարութեան դէմ։ Անօթութիւն, անգործութիւն, անապա-

հովութիւն, ուտեստի պակասութիւն և ծայրայեղ թշուառութիւնը ժողովուրդին համբերութիւնը սպառած են։ Պատմուածին նայելով, փողոցներին մէջ արիւնահեղ կռիւներ կը լինին ժողովուրդին և զօրքերուն միջև։ Քաղաքին դանազան մասերը կրակի տրուած են։ Նոյն իսկ գործաւորներն չատեր Լէնինի կառավարութեան դէմ են այժմ։ Ընկերվարական յեղափոխականները Պետրոգրադի և Մոսկուայի փողոցները պատերին վրայ յայտարարութիւններ փակցուցեր են որոնց մէջ այս խօսքեր ուղղուած են պոլշէվիդներին. « Մենք յաղթեցինք ցարութեան, ձեզ ալ պիտի յաղթենք։ »

— Ձափոնական զօրքերը սեպտ. 9ին առին Միպերիայի խաղաղասէր քաղաքը պոլշէվիգներէն ձեռքէն։

— Ամերիկեան զօրքեր ալ Արխանկէլ հասած են, Դաշնակիցներին օգնելու համար որ կարգն ու կանոնաւորութիւնը վերահաստատուի հոն։ Ասիոյ հիւսիսակողմը։

— Ձափոնական զօրքերը առեր են իման քաղաքը Իմանի և Պիքինի միջև երկաթուղիի կամուրջները անձնաց մնացած են։

— Լոնտոնի « Տէյլի Էքսբրէս »ը լուր ստացեր է թէ ցարուհին և իր 4 աղջիկներ պոլշէվիգներէն սպաննուեր են եղեր։ Մայր կայսրուհին որ իր ազգկան և իր փեսայ Օլէնպուրկի դուքսին հետ Եկաթերինպուրկի (Յորիմ) կը գտնուի, վերջերս յարձակում կրեր է եղեր կարմիր պահապան զօրքերի կողմէն։ Սև ծովի նաւատորմիղի նաւապետները միջամտեր և կռիւ ունեցեր են այդ զօրքերի հետ։ կռիւը տեր է 15 օր և վերջապէս նաւային զօրքերը յաղթելով կարմիր զօրքերին, ազատեր են մայր կայսրուհին որ ապահովութեան մէջ կը գտնուի այժմ։

ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Ֆրանսահայ զինական զօրքերը յառաջանալով հետզհետէ ափերի կը նեղցնեն գերման մարտական Հինէնպուրկի գծած նշանաւոր պաշտպանողական գիծը։ Ռազմաճակատի հարաւակողմը, ֆրանսացի զօրավար Լօմպէրի բանակը Սէն-Քանդէնի մօտեցած է. հիւսիսակողմը, Անգլիացիները անցան Հիւսթալին ջրանցքէն, գրաւեցին Մէօվրը (Mœuvres և հետզհետէ կը քանդեն գերման պաշտպանողական գիծերը, իսկ ֆրանսական գիշերուրկէ կը քաշուին և անոնց բնակիչները կը կոտորեն ու կը չարչարեն։ Բնականապէս մեծ է ուրախութիւնը այդ կողմեր ձեացած բնակիչներուն երբ ֆրանսական զօրքեր կը հասնին վերջապէս իրենց տագաստութիւն բերելով։

Զօրավար Մանժէնի զօրքերը, Գերմաններէն կատաղի դիմադրութեան հակառակ, կը սպառնան այժմ Շըմէն ափ Տամին որի մօտալուտ վերագրաւումը չատ դժուար կացութեան մը պիտի ենթարկէ գերման զօրաբանակին դիրքը։

* * *

Ամերիկացիները սեպտ. 11ին կարգ մը յանդուգն արշաւանքներ ըրին Լուէնի և վօժի մէջ։ Շատ մը կէտերի վրայ յանկարծակի յարձակեցան և թափանցեցին թշնամի դիծերին մէջ։ Մինչև որ Գերմանները իրար անցան և սկսան թնդանօթ արձակել, Ամերիկեան զօկատները թշնամիին բաւական ջնաս պատճառելէ յետոյ վերադարձան իրենց տեղը։

— Ամերիկեան զօրքերը անցած հինգշաբթի օր, սեպտ. 12, իրենց յարձակողականը սկսան Սէն-Միհիէլի (Saint-Mihiel) հատուածամասին մէջ։

Թշնամին թէև անսեղեակ չէր երեր այս յարձակողականի մասին և իր պատրաստութիւններ տեսած էր, բայց իր կառուցի դիմադրութիւնը անզօր գտնուեցաւ։ Մարտ ֆոշի ռազմապետութիւնը այս անգամ ալ յաղթեց Գերմաններուն ռազմապետութեան։ Մեծ կազմած ծրագրի համեմատ, զօրավար Բէրշինկի զօրքերը ֆրանսական զօրքերուն հետ կապակցութեամբ 5 հազարամեդր տեղ առին այդ օր և 10.000ի չափ գերի բռնեցին, թշնամին շըրջապատելով Սէն-Միհիէլի դրաւումը շատ փառաւոր յաղթութիւն մը եղաւ Լուէնի մէջ։ Իր կարևոր դիրքին պատճառով Գերմանները այդ քաղաքին մեծ նշանակութիւն տուած և 4 տարիէ ի վեր երենց ձեռքի տակ պահած էին։ Ֆրանսայի սպան որ իր զօրքերի գլուխն անցած առաջին մտաւ այդ վիրագրաւուած քաղաքի մէջ, վարչապետ և պատերազմական նախարար Տ. Գլէմանսոի որդին է, գաղթական հետևակազօրքի դաբիզէն Միշել Գլէմանսօ։

Յարձակման հետևեալ օրը, սեպտ. 13ին, Ամերիկացիները բազմաթիւ նոր դիրքեր ալ գրաւելով, յառաջացումը հասաւ 19 հազարամեդրի և գերիներուն թիւը 13.000ի։ Սկսած ուտ և ռազմանիթեր թողուցած են Գերմանները ֆրանսամերիկացի. Նեղի ձեռքը։

Սէն Միհիէլի յաղթական կռիւին մէջ ֆրանսամերիկեան զօրքերի ձեռքն ինկած գերիներուն թիւը կը հասնի 15.000ի պատկառելի թուին առած են նաև 100 թնդանօթ և վերցրուած են 400 հազարամեդր տեղ։ Գերիներէն մէջ կը գտնուին 5.320 աւստրհունգարացի զօրքեր։ Որիմի գերման զօրքերը այնչափ նեղը ձեացած են որ իտալական ճակատէն աւստրիացի զօրքեր ալ իրենց օգնութեան կանչեր են մինչ երբեմն իրենք կերթային անոնց օգնութեան։

ԹԱՂԱՂԱԿԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՌԱՋԱՐԿ

Աւստրիական կառավարութիւնը նախաձեռնութիւնն ունեցած է սեպտեմբեր 14ին չէզոք տէրութիւններին միջոցով ծանուցագիր մը ղրկելու պատերազմող տէրութիւններին, հրաւիրելով որ չէզոք երկիր մը ղրկեն պաշտօնապէս իրենց պատւիրակներ, որոնք հոն, առանց պարտաւորիչ հանդամանքի, բերան առ բերան բանակցութիւն կատարեն խաղաղութեան մը յանգելու կարելիութեան մասին, իրենց կառավարութիւններէ տեսութիւններ փոխադարձապէս իրար հաղորդեն և որոշապէս տեղեկութիւններ ստանան այն ամէն կէտերի վրայ որոնք ճշդուելու կը կարօտին։ Ծանուցագիրը յոյս կը յայտնէ որ Համաձայնութեան տէրութիւնները պատերազմի նպատակը չէ Աւստրիան անդամահատել, ամանեան տէրութիւնը ղրկել իր քիւրքական նահանգներէ և Գերմանիայի ներքին գործերին խառնուիլ։

Այդ ծանուցագրէն օրինակ մը ղրկուած է նաև Հռոմի Պապին։

Եթէ տէրութիւնները համաձայնին, խորհրդաժողովի տեղն ու ժամանակը պիտի որոշուի։ Բայց որովհետև գերման կառավարութեան հաստատ ընծայել չէ կարելի, կասկածելի է որ անոր կողմէն խաղցուած խաղ մ'է այս, առ ժամանակակայ դիմադարձ մ'ընել տալու համար այս միջոցին որ պաշնակիցները յաղթականօրէն կը յառաջանան, որպէսզի ինք կարենայ չանչ առնելով իր պատրաստութիւններ տեսնել։ Նաև դաշնակիցներ պահանջներին մէջ կայ բոլոր ճնշուած ժողովուրդներ ազատագրումը, եղած զիջումներ փոխադրիութիւնը և այլն, որոնց հակառակ կերևի յիշեալ ծանուցագիրը։

ՕՄԱՆԻ ԳԻՐՔԵՐ

Ամանիթի խմբագրատան մէջ ծախու կը գտնուին, ի միջի այլոց, և հետևեալ գիրքերը, որոնց արժէքները նշանակուած են իրենց առջև։

Մարսէյլէն դուրս դրկելու ճանապարհածախքը գնողին վրայ է. ուստի հաշուի դիւրութեան համար կը նշանակենք թէ Մարսէյլի մէջ ծախուելու գիները և թէ փոստով ուրիշ քաղաք ղրկուելու գիները։ (Այս վերջինները փակագծի մէջ դրուածներն են։ Արժէքը կանխիկ չատացած գիրք չղրկուիր։ Արձանագրուած (recommandé-registered) ծրարով ստանալ ուզողները պէտք է 25 սանդիմ աւելի դրկեն իւրաքանչիւր ծրարի համար որ 2 քիլօէն աւելի պէտք չէ կշռէ։

Լ. տէ Ամիչիս. — ՍԻՐՏ. Գիրք տղայոց համար։

(Թէեւ հեղինակը « տղայոց համար » պատահատուած կը ներկայացնէ իր այս գիրքը, բայց ամէն հասակի անձեր ալ որոնք գիտեն զգալ, սիրտ ունին եւ կաընեւորութիւն կուզան սրտի մշակութեան գործին, մեծ հաճոյքով պիտի կարդան այս գիրքը որ շատ մը լեզուներու թարգմանուած լինելէ զատ՝ 2 անգամ ալ զանազան անձերէ հայերէնի թարգմանուելով տպագրուած է (մէկը Թիֆլիս եւ միւսը Կ.պոլիս) եւ երրորդ անգամ ըլլս կը տեսնէ այժմ վէնետկի մէջ աւելի կատարելագործուած թարգմանութեամբ մը որ ըրած է Հ. Ալէքսիս Յովսէփեան։ Բազմաթիւ պատկերներով զարդարուած է։ Իտալերէն բնագիրը 699 անգամ տպագրութեան արժանացած է ցարդ։ 4 ֆր. եւ 20 սնդ. (4,50)։

Հ. Ա. Գոնտաքճեան. — ԲԱՌԻՐՔ ԳԱՂԳ.-ՀԱՅ.։ Վենետիկ Ս. Ղազար. 1914։ Գին 1 ֆր.80 (2)։

(Գրպանի փոքրագիր բառարան մ'է 710 երեսներէ բաղկացած, աժանագին և ֆրանսերէն գրէթէ բոլոր գործածական բառերը պարունակող. վերջը գրուած է նաև անկանոն բայերի խոնարհումը։)

Հ. Ա. Գոնտաքճեան. ԳՐՊԱՆԻ-ԲԱՌԱՐԱՆ ՀԱՅ-ԳԱՂԳ.։ 1914։

(Մանր տառերով ու մաքուր տպագրութեամբ 360 երեսներէ բաղկացած բառգրքոյկ մ'է որ 5.000ի չափ բառ կը պարունակէ և վերջն ալ ընտանեկան կարդ մը խօսակցութիւններ դրուած են, ֆրանսական բացատրութեան տեղերին ծանծաղացու նելու համար) 1 ֆր. 70 (1,90)։

Գործնական Քերականութիւն ֆրանսերէն լեզուի Ալնի ոճով. 7րդ տպգր. յաւելուածներով. 1910։ Ա. մաս 2 ֆր. և 40 (ճնպրթխքով. 2 ֆր. և 60 անգմ.)։

Նոյն Բ մաս 1 ֆր. և 60 անգմ. ճ. 1 ֆր. և 70 անգմ.)։

Docteur T. Aslan. — TRAIT D'UNION. ARMÉNIE-FRANCE, leurs relations depuis les temps les plus reculés. Vannes. 1917.

(Պրոպագանդի յարմար գիրք մը ընտիր տպագրութեամբ որ Հայաստանի հին ու նոր պատմութեան վրայ տեղեկութիւններ կուտայ խիստ հետաքրքրական աւանդութիւններով հարմարուած, կը թուէ յատկապէս Հայաստանի ունեցած յարաբերութիւնները Եւրոպայի եւ մանաւանդ Ֆրանսայի հետ։ Գինն 3 ֆր. 20 անգմ. (3,50)։

Եղիազար Մուրատեան. ՀԱՅ-ՀԱՅ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ Ա. ԴՐՈՒԱԿ ՌԻ և ԱՆԴ. ՊԱՊ ՕՐԳՈՒՆ։ (Հայոց պատմութեան մէջ կարևոր կէտին վրայ քննագատական տեսութիւն մ'է որի համար Մ. Դաբէկեան գրած է թէ « Հեղինակին այդ ձեռնարկութիւնը պատ. է թերամբ իրան և այն ազգին, որին պատկանում է պատմութիւնը։ 2 ֆր. 50 (2,70)

* * *

Carte de l'Arménie ancienne. Dressée par K. J. Basmadjian, professeur d'histoire. Paris 1916.

(Հայաստանի պատմութեան դուգընթաց պէտք է հետաքրքրուիլ նաև հին Հայաստանի քարտէսով որովհետև պատմութիւնը առանց աշխարհագրութեան չէ կարելի դիւրաւ ըմբռնել։ Բրոֆ. Բասմաճեան այդ մասին դիւրութիւն մ'ընծայած է այժմ հրատարակելով հին Հայաստանի ամանդին և միանգամայն խնամով պատրաստած քարտէս մը։)

Գինն է Մարսէյլի մէջ 75 սանդիմ, Մարսէյլէն դուրս 85 անգմ.

Սիսուանի աշխարհագրական քարտէզը. կիլիկիա հին և նոր, հայկական գաւառք ԺԲ—ԺԴ դարուց։

(Հայերէն տառերով այս գեղեցիկ քարտէզը, որը Հ. Ղ. Ալիշան գծագրած էր, տպագրուած է վէնետիկ, 77 հարիւրորդամեդր լայնութեամբ և 51 հարիւրորդամեդր երկայնութեամբ գեղեցիկ թուղթի վրայ։) Գին 6 ֆր.։ Մարսէյլէն դուրս 6 ֆր. 30։ Ղրկելու համար քանդրաքարտէ խոպոված մէջ դրուելով 7 ֆր.։

ՏՆՕՐԷՆ — ԽՄԲԱԳԻՐ
Ա ՓՈՐԹՈՒԱԼԵՑԻ
Ի ՄԱՐՍԷԼ

Հայերէն Տպարան Մ. Ֆորթուզալեան
Le Gérant : François CARRIERE.
Marseille. — Imprimerie du Midi